<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> N 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **15.12.2021թ.**

2021 թվականի դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստ:

Մասնակցում էին՝

Վ.Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար

Ա.Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա.Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Ն.Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Կ.Միրզաբեկյան - ՀԱՊՀ դասախոս, դոցենտ

Մ.Հակոբյան - Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու

Գ.Սահակյան - խորհրդի քարտուղար

Ա. Կոտոլյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ա.Բաբայան - «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար

Բացակայում էին՝

Ս.Գրիգորյան -Արդարադատության նախարարի տեղակալ

Ա.Մկրտչյան - Հայաստանի ոսկեգործների և ադամանդ արտադրողների ասոցիացիայի նախագահի գլխավոր խորհրդական

Քվեարկության օրակարգային հարցեր.

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:

Զեկուցող՝ Ա. Կոտոյյան

2. Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագրի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Ա. Կոտոյյան

3. Թուրքական ապրանքների վաճառքի վերաբերյալ քննարկում:

Ներկայացնող՝ Վ.Քերոբյան

4. Քայքայվող պլաստիկի վերաբերյալ քննարկում:

Ներկայացնող՝ Վ.Քերոբյան

5. Տեղական արտադրողների պաշտպանության համար մեխանիզմների կիրառման մոտեցումների վերաբերյալ քննարկում:

Ներկայացնող՝ Վ.Քերոբյան

6. Հաջորդ կայանալիք Կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթվի համաձայնեցում:

Զեկուցող՝ Ա. Կոտոյյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստին ներկա էին խորհրդի անդամների 2/3-ից ավելին՝ նիստը համարվեց կայացած:

Խորհրդի անդամները միաձայն քվեարկությամբ հաստատեցին օրակարգը:

1. Քննարկվեց օրակարգի հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ.

2.Քննարկվեց օրակարգի հարց՝ Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու վերաբերյալ.

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ հարցը ըստ էության քննարկվել էր նախորդ նիստին և Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյյանը հայտնեց, որ Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագրում Վահան Քերոբյանի կողմից առաջարկված համապատասխան փոփոխությունները կատարված են: Արմեն Կոտոյյանը բովանդակային ներկայացրեց կատարված

փոփոխությունները, առաջարկեց օրակարգի առաջին և երկրորդ հարցերը ներկայացնել մեկ հարցով, քանի որ երկուսն էլ վերաբերվում են Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագրի հաստատմանը, ինչպես նաև կարևորեց «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շուտափույթ ընդունման հարցը, որի պարագայում ավելի արդյունավետ կիրականացվեն ծրագրի դրույթները: Հարցի շրջանակներում նաև քննարկվեց նավթամթերքի ոլորտում հարցումների անցկացման հնարավորությունը, ինչի վերաբերյալ Վահան Քերոբյանը առաջարկեց հետագայում ծրագրում նշել նաև մարքեթինգային բյուջեի կոմպոնենտի ավելացումը, ինչպես նաև կատարել այդ ուղղությամբ նախնական աշխատանքներ:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցին և որոշվեց հաստատել Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագիրը:

3. Քննարկվեց օրակարգի հարց՝ թուրքական ապրանքների վաճառքի վերաբերյալ.

Թուրքական ապրանքների վաճառքի վերաբերյալ հարցի քննարկման ընթացքում Միլետա Հակոբյանը Արմեն Կոտոյանին առաջարկեց ուժեղացնել թուրքական ապրանքների վաճառքի դեմ պայքարը, ինչին Տեսչական մարմնի ղեկավարը հակադարձեց, պատճառաբանելով տվյալ հարցում վերահսկողական լիազորությունների բացակայությունը: Օրակարգի հարցի վերաբերյալ Վահան Քերոբյանը առաջարկեց հնարավորություններ ստեղծել Տեսչական մարմնի համար վերահսկելու, կանխելու և արգելելու թուրքական ապրանքների վաճառքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հայտնեց, որ թուրքական ապրանքների արգելքը լավ չի աշխատում, և որ այսօրվա օրենսդրական կարգավորումները հնարավորություն են տալիս արգելելու միայն թուրքական ապրանքների ներմուծումը Հայաստանի Հանրապետության տարածք, իսկ վաճառքի արգելքը դեռևս կարգավորված չէ օրենսդրորեն: Նաև առաջարկեց որոշակի գործիքակազմ տրամադրել Տեսչական մարմնին, որն հնարավորություն կտա վերջնական վաճառքի վայրերում իրականացնել գործողություններ արգելելու թուրքական ապրանքների վաճառքը: Արդյունավետ պայքարի համար Արմեն Կոտոյանի կարծիքով անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն, Տեսչական մարմնին տալով հնարավորություն առգրավելու և ոչնչացնելու հայտնաբերված թուրքական ապրաքները: Քննարկվեց նաև Տեսչական մարմնի ոստիկնության և սպառողների ՀԿ-ի հետ համագործակցության հարցը:

Քննարկվեց սույն հարցի շրջանակներում սոցիալական գովազդի գաղափարը նույնպես:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց թուրքական ապրանքների վաճառքի վերաբերյալ քննարկմանը:

4. Քննարկվեց օրակարգի հարց՝ քայքայվող պլաստիկի վերաբերյալ.

Վահան Քերոբյանը տեղեկացրեց, որ 2022 թվականի հունվարի 01-ից ուժի մեջ է մտնում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին 2020 թվականի ապրիլի 17-ին ընդունած Հայաստանի Հանրապետության օրենքը, համաձայն որի առևտրի օբյեկտներում, առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերի միջոցով, շրջածախ առևտրի միջոցով, ինչպես նաև բացօթյա առևտրի իրականացման դեպքում մանրածախ առևտուր իրականացնելիս ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3923 ապրանքային դիրքում գտնվող (բացառությամբ 3923 29 900 0 ծածկագրին դասվող)՝ թաղանթի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի և երկրորդային հումքից արտադրված պարկերի և տոպրակների) վաճառքը (իրացնելը) արգելվում է, որի նկատմամբ վերահսկողությունը հնարավոր է իրականացնի Տեսչական մարմինը: Վահան Քերոբյանը առաջարկեց ուսումնասիրել ԵԱՏՄ տեխնիկական կանոնկարգը, սույն օրենքը և վերահսկողության հարցը հստակեցնելու համար անհրաժեշտության դեպքում կազմակերպել քննարկում:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց քայքայվող պլաստիկի վերաբերյալ քննարկմանը:

5. Քննարկվեց օրակարգի հարց՝ տեղական արտադրողների պաշտպանության համար մեխանիզմների կիրառման մոտեցումների վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց օրակարգի 5-րդ հարցը քննարկել Խորհրդի հաջորդ նիստում որպես առաջին հարց:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հարցը ներառել Տեսչական մարմնի կառավարան խորհրդի հաջորդ նիստի օրակարգում որպես առաջին հարց:

6. Քննարկվեց օրակարգի վերջին հարցը՝ հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթվի համաձայնեցման վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի հունվարի 25-ին ժամը 13:00-ին:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի հունվարի 25-ին ժամը 13:00-ին:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Վ.Քերոբյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ **Գ.Սահակյան**

ստորագրություն